

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՆՆԱ

15 նոյեմբերի 2001 թ.

2001 թվականի նոյեմբերի 15-ին հովվապետական այցելությամբ Վիննա մեկնեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հանուն Մայր Աթոռի միաբանության Վեհափառ Հայրապետին մեկնումից առաջ բարի ճանապարհի մաղթանքներ ուղղեց Մայր Աթոռի երիցագույն միաբաններից Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի ղեկան Տ. Շահեն արքեպս. Աճեմյանը: Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը ճանապարհվեց «Զվարթնոց» օդանավակայան, որտեղից ինքնաթիռով մեկնեց Վիննա: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանը և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գավազանակիր Տ. Բաբկեն արքեպ. Նանյանը: Ժամը 14.40-ին ինքնաթիռը վայրէջք կատարեց Վիննայի Շվեյխախար միջազգային օդանավակայանում:


Վիննայում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը, կարդինալ Ֆրանց Զյոնիգը, Ավստրիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Զիվան Թաթևյանը, ինչպես նաև Վիննայի հայ համայնքի ներկայացուցիչները, որոնց համար մեծ ուրախություն ու բերկրանք էր Վեհափառ Հայրապետի այցելությունը իրենց և Նորին Սրբության օրհնությունը սրանալը: Օդանավակայանում Վեհափառն իր ուրախությունը հայտնեց, որ երկար ժամանակից հետո նորից եկել է այնտեղ, ուր անցել են իր ուսանողության ու հոգևոր ծառայության երկրասարդական տարիները:

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետն ուղևորվեց Վիննա՝ կարդինալական պալատ, ուր հյուրընկալվելու էր այս այցելության ընթացքում: Այստեղ Նորին Սրբությանը դիմավորեց Ավստրիայի կարդինալ Բրիստոֆ Շյոնբորնը:

Նույն օրը, երեկոյան ժամը 5.00-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Եկեղեցու առաջնորդարանի սրահում հանդիպեց քեդի հայ համայնքի ղեկավարության հետ: Վեհափառ Հայրապետի հետ հանդիպելու էին եկել նաև հունգարահայոց համայնքի ներկայացուցիչները, որոնք ևս մեծ փափագ ունեին Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեսնելու և հայրապետական խոսքը լսելու: Այստեղ Վեհափառ Հայրապետը պարմեց Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների, ինչպես նաև Մայր Աթոռի այսօրվա գործունեության ու կարիքների մասին:



ՎԵՀԱՓԱՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՌՈՒՄ





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՈՂՋՈՒՅՆ ԱՎԱՏՐԻԱՅԻ ԿԱՐԴԻՆԱԼ ՔՐԻՍՏՈՅ ԸՅՈՆԲՈՐՆԻ ՀԵՏ

16 նոյեմբերի 2001 թ.

Առավոտյան ժամը 11.00-ին Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Ավստրիայի Հանրապետության նախագահ Թոմաս Կլեսպիլի հետ: Վեհափառ Հայրապետը Ավստրիայի նախագահի հետ կարծիքներ փոխանակեց կրոնական փարբեր խնդիրների շուրջ, խոսեց 1915 թ. Հայոց ցեղասպանության և Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի մասին:

Նույն օրը, երեկոյան ժամը 6.00-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վիեննայի համալսարանի հանդիսությունների մեծ դահլիճում մասնակցեց Հայ Առաքելական Եկեղեցուն և Հայաստանում քրիստոնեության պելրական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված հանդիսությանը, որին ներկա էին փարբեր Եկեղեցիների ներկայացուցիչներ, համալսարանի դասախոսներ, գիտնականներ և այլ բարձրաստիճան հյուրեր: Ողջույնի խոսք ասաց ՊՐՈ ՕՐԻԵՆՏԵ-ի փնօրեն դոկտոր Յոհան Մարտեն: Այս հանդիսավոր փոնախմբության ընթացքում իրենց բանախոսություններով ու ելույթներով հանդես եկան հայ և ավստրիացի մի շարք հոգևորականներ ու գիտնականներ: Դր. Մետրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի զեկուցման թեման էր «ՊՐՈ ՕՐԻԵՆՏԵ-ի հարաբերությունները Հայ Եկեղեցու հետ», որին հաջորդեց դր. Վալտեր Զիգլի «Հայաստանն ու Եվրոպան» վերնագրված խոսքը: Ապա հայրապետական իր խոսքով հանդես եկավ նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն: Ազդու և հուզիչ էր հաղկապես կարդինալ Քրիստոֆ Շյոնբորնի փակման խոսքը, որում կարդինալ Շյոնբորնը մեծապես արժևորեց Հայ Առաքելական Եկեղեցու դերը ոչ միայն հայ ժողովրդի կյանքում, այլև համայն աշխարհի քրիստոնեական ընդանիքում: Կարդինալ Շյոնբորնը բարձր գնահատեց նաև այն առաքելությունը, որը Հայաստանյայց Եկեղեցին իրականացնում է ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում լինելով Հայաստանում և Սփյուռքում ապրող հայերի միասնականության ու հոգևոր միության իրական գրավականը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԵՎ 1700-ԱՄՅԱԿԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Սիրելի եղբայրներ ի Քրիստոս Կարդինալ Շյոնբորն և Կարդինալ Զյոնիգ,

Սիրելի հոգևոր եղբայրներ և ներկաներ.

Այս հանդիպումը կազմակերպելու համար Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Վիեննայի Գերաշնորհ Կարդինալ Շյոնբորնին և «Pro Oriente» Էկումենիկ կազմակերպությանը: Մենք առանձնակի ուրախություն ենք ապրում այսօր՝ վերըստին գրելելով ճանաչողության սիրով և քրիստոնեական արժեքների լույսով լեցուն այս կրթօջախի հարկի ներքո:

Այս պահին հիշողությունների ջերմ ալիքով Մեր հոգում վերարթնանում են գեղեցիկ հուշեր և վաղուց ծանոթ անմոռաց դեմքեր: Ծուրջ երեսնամյա ժամանակահատվածից հեպտ այսօր վերադառնալով այսօրեղ իբրև Անե-ժամանակահատվածից հեպտ այսօր վերադառնալով այսօրեղ իբրև Անե-նայն հայոց Կաթողիկոս՝ առաջին ապաստալորդ հայ Առաքելական Եկեղեցու, մեկ անգամ ևս անդրադառնում ենք և սիրով հավասարում, որ Մեր ան-ձի վրա անցնելի կնիք են թողել մշակութասեր Վիեննան ու նրա համա-սարանը:

Մենք այսօրեղ ուսանելու հնարավորությունն ունեցանք Վիեննայի Գե-րաշնորի Կաթողիկոս Ժրանց Բյոնիգի հրավերով և ազնիվ հովանավորու-թյամբ, ինչպես նաև Վիեննահայոց հոգևոր հովիվ Ս. Մեսրոպ Ժ. վարդապետ Գրիգորյանի կանչով և երջանկահիշարակ հայոց հայրապետ Վազգեն Առաջինի օրհնությամբ: Այսօր աղոթքով ենք հիշում հոգևորյա հայոց հայ-րապետին, ով մեր ժողովրդից մեծարված է «Շինարար» կոչումով: Աղոթք ենք բարձրացնում արդար հոգիների համար այն պրոֆեսորների, ովքեր առաջնորդել են Մեզ իմացության ճանապարհներով, նաև «Pro Oriente»-ի երջանկահիշարակ անդամների հոգիների համար:

Եղբայրական Մեր սերն ու երախտագիտությունն ենք բերում բոլորիդ, մասնավորաբար՝ սիրելի Կաթողիկոս Բյոնիգին՝ հայ Եկեղեցու զավակիս նկարմամբ ցուցաբերած հայրական հոգածության համար: Զրիստոնեա-կան Եկեղեցիների սիրով գործակցության սերտացման ուղղությամբ ի-մասրնազարդ Կաթողիկոս Բյոնիգի ջանքերը Վիեննան դարձրեցին Էկո-մենիկ երկխոսության կենտրոն: Ընդհիվ նրա՝ կյանքի կոչվեց այսօրեղ «Pro Oriente» Էկոմենիկ կազմակերպությունը՝ արգասավոր երկխոսություն սկսելով հին Արևելյան Եկեղեցիների հետ: Մենք ուրախ ենք, որ «Pro Oriente»-ի գործունեությունը խրախուսում և հովանավորում է նաև Վիեննա-յի ներկա շնորհազարդ Կաթողիկոս Ծյոնբորներ:

«Pro Oriente» կազմակերպությունը տարիների ընթացքում հիմնամուր կամորջ է դարձել Կաթողիկոս և հին Արևելյան Եկեղեցիների միջև: Իր գործու-նեությամբ, մասնավորաբար լայն ճանաչողություն ապահովող սրվարա-ծավալ աստվածաբանական գրականության հրատարակմամբ, կազմա-կերպությունը նպաստում է, որ գործնական փոխհասկացողությունն ու եղ-բայրական սերը, համագործակցության ոգին ջրիստոնեական Եկեղեցիների միջև: Անտարակոյս կարող ենք հաստատել, որ նաև այս կառուցողա-կան գործունեության շնորհիվ էր, որ Կաթողիկոս Եկեղեցու Սրբազան Քահա-նայրապետ հովհաննես Պողոս Երկրորդը առաջին Գահակալը եղավ Սուրբ Պետրոսի Աթոռի, որ այցնվեց հայաստան:

Մենք գնահատում ենք նաև նախանձախնդրությունն ու ջանքերն այսօր Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Գերաշնորի Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, ով, լինելով համանախագահը «Pro Oriente» կազմակերպության, շնորհակալ ներդրում է բերում հայ և Կաթողիկոս

Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների արգասավորման գործում:

Միտելիներ.

Վիեննայում Մենք գրելիում ենք հովվապետական այցով՝ ուրախ առիթ ունենալով Նախարարանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա տարեդարձը, որը 2001 թվականի ողջ ընթացքում տոնախմբում է Հայ Եկեղեցին աշխարհի բոլոր կողմերում: 17 դարերի հեռավորությունից մեր ժողովուրդը «Նաարթ քո կեցուցին զբեզ» (Մարկ. Ե 34) գիրակցությամբ է տոնում դարակազմիկ իր մեծ հոբելյանը:

Նորեյսական այս օրերին մի առիթով Մենք Մեր խոսքում հիշեցինք, որ Նախարարանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 150-րդ տարեդարձը հայ ժողովուրդը նշանավորեց Ավարայրի դաշտում՝ մարտի ելևելով հսկուն հավարի, պաշտպանելով քրիստոնեական իր սրբությունները: Համագգային այս կամքն ու հսկանառությունը բխում էին այն իրողությունից, որ 5-րդ դարում արդեն քրիստոնեությունը մեր ժողովուրդը կրում էր ոչ ինչպես արտաքին զգեստավորում, այլ իբրև մաշկի գույն: Այսպես բնորոշել է Ավարայրի հերոսը՝ Վարդան զորավարը, 451 թ. խրախուսելով հայոց ուխտապահ բանակը, որ կազմված էր ոչ միայն զորականներից, այլև՝ հոգևորականներից, շինականից և արհեստավորից, իրենց որդիների, հայրերի ու եղբայրների կողքին կանգնած հայ կանանցից: Նրալի, 301 թվականին հայ ժողովուրդը մեկ անգամ ընդմիջոր կարարեց իր ընտրությունը՝ բոլոր ժամանակների համար հռչակելով «յայսմ հաւարոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք եւ ոչ մարդիկ, ոչ աւուր եւ ոչ հուր, ոչ ջուր եւ ամենայն զինչ եւ են դառն հարուածք» (Եղիշէ):

Ձեզ հայրեկ է, որ Արարարի փեշերին տարածված Նոյի երկրում՝ Նախարարանում, Ասրծո ողորմությամբ ու շնորհով Ավարարանի Լույսը ախովել է Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ, նրանց ձեռքով հաստատվել է Հայ Առաքելական Եկեղեցին: Մեր ժողովուրդն իր հանդեպ Տիրոջ խնամքը կրկին տեսավ և զգաց Նախարարանի համար շրջադարձային ժամանակներում, երբ երկիրը վերստին ազատագրվել ու միավորվել էր Տրդատ Մեծ արքայի թագի ներքո: Ազատ ու անկախ ապրելու կամքով լեցուն հայությունը Ասրված շնորհեց ևոր Լուսավորիչ՝ առաքելապարիվ Սուրբ Գրիգորին, 13 տարի պահպանելով ու խնամելով նրան մահապարտների համար սահմանված վիրապում:

Սուրբ Լուսավորիչի ձեռքով մեր ժողովուրդը առաջնորդվեց դեպի համագգային մկրտություն, և քրիստոնեությունը առաջին անգամ Նախարարանում գրավ պաշտոնական ճանաչում: Պետական հովանին վայելող Հայ Եկեղեցու ավագանից ծնունդ առավ Ասրծո ևոր ժողովուրդ՝ հարության հավարով ապրող ու աշխատող, հարության հավարով գոյարևող: Դարերի փորձությունների մեջ եղել է, որ մեր ժողովուրդը կորցրել է ազգային պետականությունը, բայց միշտ համախոսմբ է մնացել Հայ Եկեղեցու օրհնությո-

յան ներքո ու հավատարիմ՝ քրիստոնեական իր ինքնությանը: Ազգային պետական դրոշի ներքո թե առանց դրա, հայասրանը եղել է և է՝ քրիստոնեության անառիկ պարվարն ու բերդը Արևելքի սահմանագծին: Չորս-ցանք Քրիստոսին, նույնիսկ երբ նախորդ դարակզբին իր տոհմիկ ժողովրդի արյունով համապարսած ներկվեց Արևմտյան հայասրանը, երբ մեկ ու կես միլիոն հայեր սպանվեցին օսմանյան Թուրքիայի կազմակերպած եղեռնի արդյունքում, երբ թվում էր, թե Աստված մոռացել է մեզ:

Փառք Բարձրյալին. 301 թվականի 1700-րդ տարեդարձը հայ Եկեղեցին և համայն մեր ժողովուրդը տոնախմբում է նորանկախ հայոց պետության հեղինակությանը՝ խանդավառ ու գոյնեղությամբ քրիստոնեական Եկեղեցիների եղբայրական խնդակցությամբ: Փառք Բարձրյալին, որ 17 դարերի փորձառությանը անդրադառնալով ու արժևորելով քրիստոնեական կյանքի մեր ուղին, կարող ենք հավասարել մեր նախնյաց օրինակով, որ քրիստոնեությունը ունենք ոչ իբրև զգեստավորում, այլ՝ մաշկի գույն: Քրիստոնեությամբ է շնչում հարուստ ու հնագույն հայ մշակույթը, քրիստոնեական արժեքներն են հայ կյանքի հիմքում, խաղաղության, ազատության, սրել-ծագործ կյանքի բաղձանքն է հայոց հոգիներում՝ հայասրանում, Լեռնային Ղարաբաղում և համայն հայոց Միությունում:

Այսօր, երբ հայասրանը թոթափել է անապրվածության անհույս ժամանակները, հայ Եկեղեցին հուսառատ ու հոգեկոտորոզ օրեր է ապրում: Եկեղեցաշինությամբ, դպրոցներում քրիստոնեական դաստիարակությամբ, ուղի-հեռուարարնային ծրագրերով, հրապարակական քարոզությամբ, նպաստամատուց ստաբիլություններով հայ Եկեղեցին փորձում է վերականգնել բռնարհիւրական տասնամյակների ավերները, հավատը նորոգել մեր ժողովրդի սրտերում:

Հայասրանում քրիստոնեության պետական կրոն հռչակման պահանջի հոբելյանը, նախնյաց սուրբ հիշարարկների ոգեկոչումով առ Աստված, Ուխտի նորոգման երկնային մի նոր հրավեր եղավ մեր ժողովրդի կյանքում: Տոնակատարություններին մասնակցություն բերեցին քրիստոնեական Եկեղեցիների հոգևոր պետեր, հոգևորականներ ու հարյուրավոր ներկայացուցիչներ, որոնց ներկայությունը ոգեշնչեց ու զորացրեց իր հավատի մեջ մեր ժողովրդին: Մեր Եկեղեցու տոնը վերածվեց համաքրիստոնեական ուրախության, քանզի ի Քրիստոս մեկ ընդունիքի անդամներ ենք՝ նույն առաքելությամբ, քանզի «ունիմք զնոյն հոգի հաւարոց» (Բ Կորնթ. Դ 13):

Իր ազգային բնույթով հանդերձ՝ հայ Եկեղեցին ջերմ ջարագովն է քրիստոնեական Եկեղեցիների էկումենիկ համագործակցության, և Մենք մեր ժողովրդի հեղ ռուսիս ու միախառնված ենք՝ տեսնելով, որ «Միության ի կարեւորութ, ազատութիս յերկրայականս եւ սէր յամենայնի» հիմքերի վրա օրավոր զորանում է քրիստոնեական Եկեղեցիների էկումենիկ ոգին՝ ի խնդիր մարդկության առաջ ծառացած հիմնականիւրների բարվոք վճռման և հանուն աշխարհի ապահով ու խաղաղ գալիքի: Այս առումով վերստին Մեր

գնահատանքն ենք հայտնում «Pro Oriente»-ին՝ իր ծավալած Եկեղեցիների միությունական գործունեության համար:

Վերաբիժն Մեր երախտագիտությունն ու լավագույն մտադրանքներն ենք բերում այս հանդիպման կազմակերպիչներին և աղոթք բարձրացնում առ Աստված, որ միշտ ամուր լինի եղբայրությունն ու սերը, և հավատավոր գործերով բազում բարի արտոյներ տա համագործակցությունը քրիստոնեական Եկեղեցիների: Մենք աղոթք ենք բարձրացնում «Pro Oriente» Էկումենիկ կազմակերպության մշտանորոգ հաջողությունների համար: Աղոթում ենք աշխարհի խաղաղության ու բոլոր ժողովուրդների բարօրության համար: Թող Ամենախնամ Տերը Իր օրհնության ներքո պստիպանի հյուրընկալ Ավստրիան, նրա հիմնադրող մայրաքաղաք Վիեննան և գիտության ու կրթության կամառ այս համալսարանը:

«Ողջ լերուք ի Տէր, գօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրհնեալ ի Մէնք. ամէն»:

17 նոյեմբերի 2001 թ.

Վեհափառ Հայրապետի Վիեննա այցելության երրորդ օրը, նոյեմբերի 17-ը, հեղաբեկ էր և լի գեղեցիկ պալմորություններով: Առավոտյան ժամը 11.00-ին Նոբին Սրբությունը շքախմբով մեկնեց Վիեննայից դուրս գտնվող բենեդիկտյան Գոպվայգ վանք: Հայոց Հայրապետն այստեղ ծանոթացավ վանքի պատմությանը, դիպեց վանական համալիրի գեղեցիկ կառույցները, այցելեց վանքի թանգարան: Այնուհետև տեղի ունեցավ միասնական աղոթք, որից հետո Վեհափառ Հայրապետի պալովին հյուրասիրություն կազմակերպվեց:

Նույն օրը, ժամը 17.00-ին, Վեհափառն այցելեց նաև Վիեննայի կիրակնօրյա դպրոց, հանդիպեց դպրոցի սաներին և ուսուցիչներին, պարասխանեց նրանց հուզող հարցերին և իր հայրապետական օրհնությունը բաշխեց բոլորին:

18 նոյեմբերի 2001 թ.

Կիրակի օրը Վիեննայի հայոց Ս. Հռիփսիմն եկեղեցում, որտեղ հավաքվել էին Ավստրիոյի հայ համայնքի բազում հավատացյալներ և պաշտոնական անձինք, Վեհափառ Հայրապետը Ս. Պատարագ մարուցեց: Պատարագի ընթացքում տեղի ունեցավ Հայրապետական պարզենների բաշխում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարդինալ Զրիստոֆ Զյոնբերգին նվիրեց 1700-ամյակի խորհրդով պարաստված լանջախաչ, նույն կերպ Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանին՝ պանակե, իսկ եկեղեցուն՝ մի սկիհ: Ամենայն Հայոց Հայրապետի կողմից մարուցվող այս Ս. Պատարագին ներկա գտնվելու համար Ս. Հռիփսիմն եկեղեցի էին եկել և քույր Եկեղեցիների ներկայացուցիչները: Հավարդ Սուրբ Պատարագի եկեղեցու մոտ ձևամբ Վեհափառ Հայրապետի կարարվեց Հայոց Մեծ Եղեռնի նահապետական հիշատակին նվիրված խաչքարի օծումը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ՎԻԵՆՆԱՅԻ ՍՈՒՐԲ ՀՈՒՓՄԻՍԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Յանկ ի մեզ, Տէր, զհաւար, զյոյս, զւէր եւ զամենայն գործս առաքիւնութեան»:

(ԺԱՄԱԳԻՐԸ)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Անսահման հուզմունքով է համակված Մեր հոգին, երբ վերադին կանգնած ենք Սուրբ Հոփխիմն եկեղեցու Ավագ Խորանին, ուր մատուցել ենք Մեր անդրանիկ Պարարագը: Մեր հոգին ջերմացած է հուշերով՝ կապված Վիեննայում ապրած և ուսանած տարիների, Մեզ սիրելի ու հարազատ անձանց հետ: Այսօր երջանիկ ենք Մենք և առ Աստված գոհաբանական աղոթք ենք բարձրացնում, որ 30 տարիներ անց առաջնորդեց Մեր քայլերը դեպի ձեզ՝ դեպի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հարազատ ու սիրեցյալ գավակները, վերադին տեսնելու ձեր հավատարմությունը հայրենյաց սրբություններին, վերադին համոզվելու, որ Վիեննայի համայնքը լեցուն է հայ կյանքի աշխույժով:

Քրիստոսանորոգ Հայաստանից, Արցախի ազատաշունչ բարձունքներից, մեր հողը սրբացրած աղոթաբույր վանքերից, Հայոց Հայրապետաց շիրիմներից ողջուն ենք բերել ձեզ:

Ողջունում ենք ձեզ 1700-ամյա Սուրբ Էջմիածնի անմահ խորհրդով, Սուրբ Լուսավորչի Կանթեղի լույսով, հայոց նոր կյանքի Բարի Առավորի հույսով ու հավատով:

Սուրբ Էջմիածնի ու Մայր Հայրենիքի սերն ու կարողը, հայրենաբնակ ձեր եղբայրների ու քույրերի ջերմ բարեմաղթանքներն ենք փոխանցում ձեզ:

Հովվապետական Մեր այցելության այս պատեհ առիթով երախտագիտությամբ ողջունում ենք Ավարդիայի պետությանն ու ժողովրդին և Կաթոլիկ Եկեղեցուն այն բարեսեր վերաբերմունքի ու վստահության համար, որ ավելի քան 200 տարի ցուցաբերել ու ցուցաբերում են այսպեղ հաստատված հայության հանդեպ:

Հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պարվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանին, ով տասնամյակներ շարունակ իր նվիրյալ ծառայությունն է մատուցում Վիեննայի համայնքին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն և մեկն է այն սիրելի անձանցից, ովքեր առաջնորդել են հոգևորականի Մեր առաջին քայլերը:

Ի Քրիստոս սիրով ողջունում ենք այսպեղ ներկա Կարդինալ Շյոնբորգին, հոգեվոր մեր բոլոր եղբայրներին: Քրիստոնեական եղբայրական սի-

ԿՏԱԽԱՆԵՆԻ ՏՍԵՆԻ ՀԱՌՄԱԸ ԱՆՈՒՍԶՈ ԳԱՌԺՇՈՂԱԿ ՎԻՈՏՈՎԿԻ ՏՈՒՆՈՏՈՂԻՆ, ՎԻՍԳԵԼԱ ԶԱՌ ՏՍԵՆԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՊԱՐԽԻԱԿԱՆ ՍԵՐԻԱ



ՄԱՆ ՇՏԵՖԱՆԻ ՏԱԳԱՐՈՒՄ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՐԽԻԵՊԻՍԿՈՍՈՍԻ ՔԻՐԱՍՏԻՆԻ

րո ողջույն ենք բերում Մխիթարյան հայ կաթոլիկ միաբանությանը, որ Ավարդիայի հյուրընկալ հարկի ներքո վաստակյալ ծառայություն է մատուցում հայագիտությանը և հայ մշակույթին:

Միրելի բարեպաշտ հավատացյալներ.

Նոր դարի հեր նոր առաւելորդ է բացվել ազգային մեր կյանքում՝ պսակված Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի լույսով: Համայն ժողովրդով 2001 թվականի անցնող ամիսների ընթացքում ապրեցինք քրիստոնեությունը հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի ոգեղեն խորհրդով: Նորոգեցինք մեր Ուխտը առ Աստված՝ «Յանկ ի մեզ, Տէր, զհաւար, զոյս, զսէր եւ զամենայն գործս առաքիւնութեան» մեր հայրերի սրբազան աղոթքով: Զորացանք հավատով ու հայ ինքնությանը, արժևորեցինք քրիստոնեության դերը մեր ժողովրդի և յուրաքանչյուրիս կյանքում:

Միտելի, հարության հավարը ազգային մեր կյանքի իմաստն ու գոյության խորհուրդն է: Այն նվիրական օրերից, երբ Տիրոջ առաքյալները հավարի, հույսի և սիրո Ավետարանը բարոզեցին Արարարի փեշերին վաղեմական ժամանակներից ապրող մեր ժողովրդին և հասարակեցին Հայոց Եկեղեցին, նոր ընթացք ստացավ հայ կյանքի ուղին՝ Աստծո շնորհով առաջնորդվելով դեպի 301 թվական:

Հավատակերտ այն հաղթական օրերից, երբ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Արածանիի ջրերում մկրտեց հայոց Տրդատ թագավորին, արքունիքը, զորքն ու ժողովրդին և քրիստոնեությունը հայաստանում հռչակվեց պետական կրոն, հայոց պարմությունը դարձավ հավարի պարմություն, հավատով կանգնեցված վանքերի ու եկեղեցիների պարմություն, հավատով ծնունդ առած Մաշտոցյան գրերի, տիեզերքի անհունն ու մարդու հոգին քննող աստվածնաւազ մտքի, հավարավոր հոգուց պոկված երգ ու քերթվածի, մագաղաթին ծաղկած գրչության, քարը շնչավորած պարկերուզրության պարմություն: Այո, սիրելի զավակուհի Մեր, 2000 տարի Բրիտանոս քայլում է հայոց պարմության ընթացքով, լցնելով հայ կյանքը խաղաղության սիրով ու ազատության բաղձանքով, հարության վարսահոսությամբ ու սրելով ազգորդ ուժով: Մահաբեր փորձությունների դիմացանք, արարեցինք ու խնդրեցինք՝ Տէր, «յաւել մեզ հաւարս» (Ղուկ. ԺԷ 5): Հսկուն հավարի մարտադրաշտ ելակն, նահաւակվեցինք ու մեր հայացքը երկնքին հաւանքով խնդրեցինք՝ Տէր, «յաւել մեզ հաւարս»: Աշխարհն աշխարհի սփռված՝ մեկ ու միասնական մնացինք հավատով, հայոց հոգիներին Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու ավագանի դրոշմումով՝ երիցս խնդրելով՝ Տէր, «յաւել մեզ հաւարս»:

Միրելի բարեպաշտ հայորդիներ.

Հարության հավարը և հավարաբնությունը մեր Սուրբ Եկեղեցուն մեր նախնիք ավանդել են մեզ որպէս ամենաթանկ ժառանգություն, որպէս հաղթության ու հավերժության ճանապարհ: Մեր այցի ու ձեզ հեր հանդիպ-

մասն այս բացառիկ առիթով այսօր Մենք աստիճանագրել շնորհին ունենք՝ որպես Հովհաննիս Կայոց, մեր նախնայաց շորթներով պարգևանել ձեզ և ասել, ջնոթանաք մեր հայրերի սուրբ ավանդը, հավատարիմ մնացեք առ Զրիարոս սիրո մեջ, վառ պահեք Բեթղեհեմի Մսուրից աշխարհին ծագած մշտնջենավոր այն Լույսը, որից կայծ առած Լուսավորչի Կանթեղը հավատարի, հույսի ու սիրո շողերով կյանք է տալիս հայ հոգիներին և այսօր 1700-ամյակի խորհրդով պայծառ շողարձակում հայոց երկնքում: Կայոց Առաքելական Եկեղեցին է առ Զրիարոս մեր սիրո ու հավատի ծննդավայրը, մոլոր ճանապարհներից ու սայթաքումներից հեռու պահող ու անսայթաք առաջնորդող անմար փարոսը: Այսպես ճանաչե՛ք ու սիրե՛ք մեր Եկեղեցին:

Այսօր մեր ժողովուրդը միասնական ջանքերով վերստին նվաճել է իր անկախ պետականությունը՝ հայաստանում, ազատագրել Արցախը և վերստին հայացքը հառել հայրենյաց կյանքի երկնքում բարձրացող Արդար Արեգակի լույսին, որ խոստանում է նոր Արևազայ, նոր զարթոնք ու վերածնունդ:

Լի ենք վստահությամբ Եղեռն վերապրած ժողովրդի, որն աշխարհագրիվ՝ շարունակում է հավատարիմ լինել իր հոգևոր և ազգային արժեքներին: Կարար ենք ձեզանով, սիրելի զավակներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, որ իբրև լիկուս, ազնիվ ու արժանավոր քաղաքացիներ Ավարդիայի, քրիստոնյա հայի ձեր նկարագրով, նվիրումով ու սիրով մասնակից եք և ձեր նշանակալի ներդրումն եք բերում ավանդաշատ ու ծաղկուն այս երկրի հասարակական կյանքին: Մենք գիտենք, որ համայն մեր ժողովրդի հետ դուք նույնպես ապրում եք Մայր Հայրենիքի և հայրենաբնակ մեր ժողովրդի հոգևորով ու մասնակցություն բերում ներկա դժվարությունների հաղթահարման գործում՝ մշտապես լավարեսությամբ նայելով ապագային: Հավատում ենք, որ Հարության հույսը նորոգած մեր հոգում, ի ափյուռն աշխարհի անխափան միասնականությամբ, Արևազայի նոր վստահությամբ սիրի հաղթահարենք առկա խնդիրները, պիտի բարօր, բարգավաճ ու հզոր դարձնենք Մայր Հայրենիքը, հայաբույր կյանքի նոր ոգի ու շունչ հաղորդենք Միյուռքին և շարունակենք հավատարմոր մեր ընթացքը որպես Աստուծո նոր ժողովուրդ, որ նորովի է ապրում քրիստոնեական իր 2000-ամյա սուրբ ժառանգությունը:

Միևնիման, առ Աստված մեր սերը դարձնենք սեր մեր ընդանիքներում, անձնական հարաբերություններում, համազգային կյանքի բոլոր բնագավառներում: Աստվածային, երկնաբուր, արարող այդ սիրով ձեռնարկենք ու իրականացնենք մեր գործերը՝ ի վկայություն և ի հաստատումն ազգային մեր կյանքի 1700-րդ հավատակեցր նոր առավորի: Ի խորոց սրտի մեր խոսքը առ Աստված այսօր միահյուսենք դարերով հնչած մեր հայրերի աղոթքին և հայցենք՝ «Յանի ի մեզ, Տէր, զհաւար, զյոյս, զէր և զամենայն գործս առաքինութեան»՝ միշտ և հավիտյան. ամեն:

19 նոյեմբերի 2001 թ.

Առավոտյան ժամը 8.00-ին Վեհափառ Հայրապետը ՊՐՈ ՕԲԻԵՆՏԵ-ի ղեկավարության հետ իր շքախմբով մեկնեց Զալցբուրգ, որտեղ հյուրերին դիմավորեց Էդեր արքեպիսկոպոսը՝ ուրախությամբ ողջունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի գալուստը: Էդեր արքեպիսկոպոսի կազմակերպած հյուրասիրության ընթացքում Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ հարաբերությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Կաթոլիկ Եկեղեցու Ավստրիոյ կառույցի միջև ավելի կսերտանան, ինչն իր կարևոր նպաստը կրերի Հռոմեական Կաթոլիկ և Հայ Առաքելական Եկեղեցիների փոխըմբռնողության և համագործակցության առավել սերտացմանը:

Այնուհետև հյուրերը դիպրեցին Ս. Պետրոսի սքանչելի քաճարը: Այս քաճարը հայտնի է նաև նրանով, որ այստեղ առաջին անգամ նվագել է աշխարհահռչակ կոմպոզիտոր Մոցարտը: Տաճարի դիպումից հետո Վեհափառը հրավիրվեց ներկա գտնվելու Զալցբուրգի համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի նոր դեկանի երդման արարողությանը: Այնուհետև Ս. Պետրոսի քաճարում տեղի ունեցավ Էկումենիկ ժամերգություն:

Ասեմք, որ Զալցբուրգում է ուսանում Հոգեշնորհ Տ. Աբգար արքեպ Նովակիմյանը: Հայր Աբգարը, իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևորական և Մայր Աթոռի միաբան, ուսանում է տեղի Աստվածաբանական համալսարանում: Իր ժամանումից ի վեր Հայր Սուրբը մեծ աշխատանք է քարել Զալցբուրգում ապրող հայերի համախմբման համար: Նա կարողացել է այստեղ ձևավորել մի փոքրիկ համայնք, որի անդամների համար շատ մեծ ուրախություն էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը: Հայր Աբգարի ջանքերով կազմված փոքրիկ երգչախմբի անդամները «Սուրբ, Սուրբ»-ը երգեցին, այնուհետև միասնական աղոթք տեղի ունեցավ:

Այս ամենից հետո Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց Ս. Պետրոսի արքարայության ռոմանական սրահ, որտեղ Նորին Սրբությունը բանախոսեց «1700 փարի բրիստոնետությունը Հայաստանում» թեմայով: Ամենայն Հայոց Կաթողիկոսի այս խոսքին ներկա էին քույր Եկեղեցիների և հայ համայնքի ներկայացուցիչներ, Զալցբուրգի հասարակայնության ներկայացուցիչներ և պետական պաշտոնապար անձինք: Բանախոսությունից հետո փոքրիկ հյուրասիրություն տեղի ունեցավ Ս. Պետրոսի քաճարի հյուրասրահում: Ժամը 20.00-ին Վեհափառ հայրապետը վերադարձավ Վիեննա:

20 նոյեմբերի 2001 թ.

Ժամը 11.00-ին Հայաստանյայց Եկեղեցու հայ համայնքի կենտրոնում տեղի ունեցավ մամուլի ասուլիս, որին ներկա էին ինչպես տեղի, այնպես էլ Սփյուռքի հայ պարբերականների լրագրողներ: Ասուլիսի ընթացքում Վեհափառը պատասխանեց

լրագրողների հարցերին, խոսեց 1700-ամյակի և Հայաստանի ներքին կյանքին առնչվող եկեղեցական փարբեր խնդիրների մասին: Ժամը 11.00-ին Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց Վիեննայի քաղաքապետարան, որտեղ Վիեննայի քաղաքապետի կողմից ջերմ ընդունելություն ցույց փոխեց: Քաղաքապետարանում Ամենայն Հայոց Կաթողիկոսը սպորագրեց պատվավոր հյուրերի համար նախատեսված ոսկեգոծ մափյանում:

21-22 նոյեմբերի 2001 թ.

Նոյեմբերի 21-ը Վեհափառն անցկացրեց հայ համայնքի հեղ, մասնակցեց համայնքի պատրաստած ծրագրերին, միջոցառումներին:

Նոյեմբերի 22-ին, առավոտյան ժամը 11.00-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրեգին Բ-ն հանդիպում ունեցավ Ավստրիայի արքաքին գործերի նախարար ղոկվոր Բենիփա Ֆերերո-Վալդների հեղ: Հանդիպման ընթացքում քննարկվեց Ղարաբաղյան հակամարտության խնդիրը: Հայոց Հայրապետը հույս հայտնեց, որ Ավստրիան իր կարևոր մասնակցությունը կբերի հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Ժամը 12.30-ին հյուրասիրություն փողի ունեցավ Ավստրիայի կրթության, գիտության և մշակույթի նախարար Էլիզաբեթ Գեեերի մող, որի ընթացքում քննարկվեցին երկու երկրների և ժողովուրդների ազգային-հոգևոր ժառանգության պահպանության և այսօրվա կյանքում նորովի արժևորելու հարցերը:

Ժամը 15.00-ին Նորին Սրբությունը հանդիպեց Ավստրիայի Հանրապետության կանցլեր Վոլֆգանգ Շյուսեյլի հեղ: Վեհափառ Հայրապետը Ավստրիայի կանցլերին շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար: Զրույցի ընթացքում քննարկվեցին այսօրվա կրոնական և հասարակական կյանքի փարբեր հիմնախնդիրներ: Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ գնալով ալվի կզարգանան բարեկամական հարաբերությունները Հայաստանի և Ավստրիայի միջև:

Երեկոյան ժամը 19.00-ին Ս. Շպեֆանի փաճարում փողի ունեցավ Էկումենիկ հանդիսավոր, արարողություն, որին ներկա էին նաև քույր Եկեղեցիների մեծաթիվ ներկայացուցիչներ, իսկ արարողությունը ղեկավարում էր կարդինալ Զրիստոֆ Շյոնբորնը, որը բարձր գնահատեց Հայ Առաքելական Եկեղեցու դերը թե՛ անցնող դարերում և թե՛ այսօր ծավալած հոգևոր վերազարթոնքում:

23-24 նոյեմբերի 2001 թ.

Առավոտյան Վիեննայում Վեհափառ Հայրապետը կարդինալ Շյոնբորնի հեղ այցելեց կարդինալական առաջնորդարանի թանգարան: Այս թանգարանում եկող փարվա ապրիլից հուլիս ամիսներին կայանալու է Մայր Աթոռում պահվող հոգեվոր-մշակութային արժեքների «Հայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսը: Վեհափառին ներկայացվեցին թանգարանի պայմանները, այնուհետև Նորին Սրբությունը դիպրեց ցուցանմուշները, ապա ժամը 12.00-ին հանդիպում ունեցավ Միխայրյան հայ-

րերի հետ: Վեհափառին դիմավորեց Մխիթարյանների ընդհանուր արքահայր Եղիա ծ. վրդ. Քիլաղայանը: Մխիթարյան հայրերի հետ Հայոց Հայրապետը այցելեց Գաճար և թանգարան:

Նոյեմբերի 24-ը Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Վիեննա այցելության վերջին օրն էր: Առավոտյան ժամը 8.00-ին Վեհափառը Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի հետ հյուրասիրվեց Արքեպիսկոպոսական պալատում կարդինալ Շյոնբորնի կողմից, այնուհետև, ժամը 10.10-ին, մեկնեց Վիեննայի օդանավակայան, որտեղից վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ԳԵՎՈՐԳ ՄՐԿ. ՄԱԿԱՐՅԱՆ